



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ** - Կարդալու կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները գրաճանաչության փուլում

**ԱՌԱՐԿԱ** - Դասվար

**ՀԵՂԻՆԱԿ** - Անժելիկա Խաչատրյան

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ** – Չովաբերի Ե.Չարենցի անվան միջնակարգ

## Բովանդակություն

Ներածություն .....	3
Կարգալու կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները գրաճանաչության փուլում .....	5
Եզրակացություն .....	21
Գրականության ցանկ .....	22

## Ներածություն

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության դաստիարակությունը մեծապես պայմանավորված է երեխաների կարդալու կարողության ձևավորվածության մակարդակով: Երեխաների՝ ճիշտ, սահուն գիտակցված, արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական կրթության հիմնական խնդիրներից մեկն է. ընթերցանությունը հսկայական դեր է խաղում մարդու կրթության, դաստիարակության և զարգացման գործում: Ընթերցանությունը պատուհան է, որի միջով երեխան տեսնում և ճանաչում է աշխարհը և ինքն իրեն:

Կարդալու կարողությունը և հմտությունը ձևավորվում են ոչ միայն որպես խոսքային և մտավոր գործունեության կարևորագույն տեսակ, այլ նաև որպես հմտությունների և կարողությունների բարդ համալիր, որն ունի ընդհանուր բնույթ և գործածվում է աշակերտի կողմից բոլոր ուսումնական առարկաների ուսումնասիրման ժամանակ, արտադասարանական և արտադպրոցական կյանքում: Հետևաբար, անհրաժեշտ է պարբերաբար, նպատակաուղղված աշխատանք կատարել սահուն, գիտակցված, անսխալ հմտությունների զարգացման և կատարելագործման ուղղությամբ:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել մեթոդական այն միջոցներն ու հնարները, որոնք նպաստում են գրաճանաչության ընթացքում սովորողների կարդալու կարողության ձևավորմանը:

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել ավարտական աշխատանքի թեմայի վերաբերյալ եղած մեթոդական գրականությունը:
2. Դիտարկել գրաճանաչության ուսուցման ժամանակակից մեթոդները և վեր հանել կարդալու ալգորիթմի ձևավորման մեթոդների առանձնահատկությունները:
3. Վերլուծել կարդալու կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները գրաճանաչության ընթացքում:

Ընթերցասեր մարդու դաստիարակությունը սերնդի բարոյական դաստիարակության տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի, ինչի հիմքում ընկած է նախևառաջ կարդալու կարողության ձևավորման արդյունավետ մեթոդների կիրառությունը: Այս առումով ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական նշանակություն, քանի որ կարդալու ալգորիթմի ձևավորման մեթոդական համալիրի վերլուծությունը և փորձարկումը գործնականում չափազանց կարևոր է ուսուցչի համար՝ կարդալու կարողության ձևավորման գործընթացում դրանք փուլ առ փուլ արդյունավետ իրականացնելու և լավագույն արդյունքի հասնելու համար:

Այսպիսով, մեր հետազոտական աշխատանքի թեմայի **առդիականությունը** պայմանավորված է սովորողների կարդալու կարողության ձևավորվածության բարձր մակարդակի և այդ համատեքստում գրաճանաչության գործընթացի դերով:

Մեր ուսումնասիրությունները կատարել ենք Գեղարքունիքի մարզի Չովաբեր գյուղի միջնակարգ դպրոցում, ուր մենք աշխատում ենք որպես ուսուցիչ:

# Կարդալու կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները գրաճանաչության փուլում

## ա. Բառի և բառաշարքերի ընթերցում

Բառը լեզվի կարևորագույն միավոր է, առարկայի, երևույթի, հասկացության, զգացմունքների և այլ արժեքների իմաստակիրը: Հայտնի է՝ որքան հարուստ է մարդու բառապաշարը, այնքան ընդարձակ են նրա՝ իր մտքերը տրամաբանված, հիմնավոր, ճշգրիտ և արտահայտիչ ներկայացնելու հնարավորությունները:

Բառերն իրենց հնչյունական կազմով և իմաստով մեր գիտակցության մեջ հանդես են գալիս իբրև օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների փոխարինողներ: <<Այն , ինչ որ մեզնից անկախ ու մեզնից դուրս գոյություն ունի իբրև իր, առարկա, երևույթ և այլն, մեր գիտակցության մեջ հանդես է գալիս որպես այդ իրին, առարկային, կամ երևույթին փոխարինող բառի նյութական իմաստ >>[3, էջ 202]:

Հնչյունների և տառերի ուսուցմանը զուգընթաց՝ աշակերտները սովորում են կարդալ ըստ բառաշարքերի՝ սկզբնական շրջանում միավանկ, հետագայում՝ բազմավանկ բառեր:



Կարդալու ուսուցումը սկսվում է բառը կարդալուց՝ անկախ այն բանից, թե կարդալու սկզբնական, ելակետային միավորը որն է՝ տառը, վանկը, թե՝ բառը: Ճիշտ է, երեխան դեռ երկար ժամանակ մտքում վանկ առ վանկ նույնիսկ տառ առ տառ կարող է կարդալ, հնչյուններն ու վանկերը կապել՝ բառեր ստանալու համար, սակայն կարդացվող, արտաբերվող իմաստային միավորը պետք է լինի բառը: Սա երեխայի մեջ աստիճանաբար կմշակի բառը տեսնելու և այն միանգամից կարդալու կարողություն:

Կարդալու ուսուցման առաջին աշխատանքը կատարվում է դասի ընթացքում շարժական տառերով: Նոր հնչյունը ուսուցանելուց հետո, երբ դասարանի մեծադիր

տառադարանից (հետո նաև՝ անհատական տառադարանից ) հանվում են ուսուցանվող հնչյունի նախ՝ փոքրատառը, սկսվում է նոր տառն ունեցող բառեր կարդալու աշխատանքը: Նախ բառը վերլուծվում է հնչյունների, հետո երեխաները հավաքում են այդ հնչյուններին համապատասխանող շարժական տառերը, հաջորդաբար դասավորում, ապա կարդում այն միանգամից:

Տրված բառերը կարդալիս նախ կարդացվում են երկհնչյուն, ապա՝ եռահնչյուն միավանկ ու երկվանկ բառերը՝ միշտ պահպանելով ամբողջական բառերով կարդալու եղանակը: Այս եղանակն աստիճանաբար կարդալու տիրապետող ձևը պետք է դառնա:

Երկարաշունչ կամ բազմավանկ բառերը կարդալ սովորեցնելու ժամանակ, ինչպես նշվում է վերևում, կարելի է գործածել վանկատման եղանակով, որն ունի դրսևորման ձև՝ 1) ապակի, Վարուժան, և 2) Արմինե՝



:

Բառերը սկզբից ևեթ ամբողջական ձևով, միանգամից կարդալ սովորեցնելու տեսակետից շատ կարևոր է բառաշարքերի բառերի մատուցման եղանակը: <<Այբբենարանում>> բառաշարքերը մատուցվում են մեթոդական հետևյալ եղանակներով:

1) Բառերի հնչյունային աճը սկզբից կամ վերջից.

Օրինակ՝ աղ արի սա տար  
մաղ տարի սար տարի

2) Բառերի հնչյունային կազմի՝ 1 հնչյունով փոփոխությունը (որը միաժամանակ հնչյունի իմաստազատիչ արժեքի ամրապնդումն է).

Օրինակ՝ լար համ սար հող սուր  
լուր հում սուր շող սուտ և այլն:

3) Միավանկ բառի ամբողջ հնչյունախմբի՝ երկվանկ բառի մեջ որպես առաջին կամ երկրորդ վանկ առկայությունը.

Օրինակ՝ միս նուշ մատ կար  
ամիս անուշ արմատ կարկուտ և այլն:

4) Միևնույն բառի կամ հնչյունախմբի՝ որպես ընդհանուր բաղադրիչի առկայությունը բառերի մեջ.

Օրինակ՝

Արա կուտ սոխ խաղալ

Արարատ կարկուտ սոխակ խաղող

համեստ հատակ

պահեստ հատիկ

արհեստ հատուկ և այլն:

<<Այբբենարանում>> որոշակի տեղ է տրված նույնարմատ բառերից կազմված բառաշարքերին: Այդ բառաշարքերն իրենց դրսևորման տարբեր ձևերով նպաստում են բառի մեջ ամբողջական բառապատկեր << տեսնելուն>> և կարդալու միավորի մեծացմանը: Այսպես՝ նույն կամ կրկնվող արմատը կամ ածանցը կարող է ներկայացված լինել՝

1) գույներով տարբերակված

**վախ** **Յրաչուհի** **Պերճուհի**

**վախկոտ**

**անվախ**

2) և՛ գույնով տարբերակված, և՛ իրար տակ՝

**ժամ** **յուղ** **աստղ**

<b>Ժամանակ</b>	<b>յուղայի</b>	<b>աստղիկ</b>
<b>Ժամացույց</b>	<b>յուղաներկ</b>	<b>Աստղիկ</b>

5) իրար տակ՝ առանց գունային տարբերակման՝

մարզիկ	օճառ	պարզ
մարզել	օճառաման	պարզել

6) առանց որևէ տարբերակման

ծեռք	երես	որոշ
անծեռոցիկ	ժպտերես	անորոշ

Բառի մեջ ամբողջական բառապատկեր նկարել-ընկալել կարելի է սովորեցնել նաև նկարի միջոցով:




Աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել այս հանգամանքի վրա, որպեսզի նրանք ձգտեն բազմաձևակ բառի մեջ առանձին բառապատկերի տեսնելուն և բառը կարդան ամբողջական մասով: Կրկնվող արմատը տպավորվում և պատրաստի բառապատկերի է վերածվում, որին մտում է ավելացնել, համակցել որևէ ածանց կամ արմատ: Այս եղանակը համահունչ է գլոբալ մեթոդի՝ ամբողջական բառերով կարդալու ընդհանուր միտումին և նպատակ ունի ապահովելու ընդհանուր բառապատկերի ընկալումն ու մտապահումը:

Բառապատկերի ընկալմանն ու արագ կարդալու կարողության մշակմանը նպաստում են նաև առաջադրված նույնահանգ բառերից կազմված բառաշարքերը, ինչպես օրինակ՝

շապիկ	չամիչ	ապակի	պատուհան
մաշիկ	քամիչ	կիրակի	պահարան և այլն:
	սուլիչ		



<<Այբբենարանում>> տրված են նաև վանկային նույնատիպ կառուցվածք ունեցող բառերից կազմված բառաշարքեր: Բառերի այսպիսի խմբավորումն ավելի ընդհանրացված բնույթ ունի և նույնպես կարող է հիմք դառնալ կարդալու ուսուցման համար: Օրինակ՝



Սիրուն

Արմեն

պուրակ


Սիրան

Կարեն

կապիկ և այլն:




Սույն <<Այբբենարանում>> յուրահատուկ տեղ է տրվում բառակազմական վերլուծություններին կամ, ինչպես ընդունված է ասել, կառուցվածքային ընթերցանությանը: Նպատակային վարժություններ կատարելու դեպքում դրանք նպաստում են ոչ միայն արմատները, այլև հաճախ հանդիպող ածանցները որպես պատրաստի միավորներ տեսնել-ընկալելուն:

Օրինակ՝



Յրաչուհի

Պերճուհի



կեռաս

զկեռ

կեռասենի

զկեռենի և այլն:

Դասի ժամանակ այս կարգի վարժություններին պետք է համապատասխան ուշադրություն դարձնել:

Որոշակի բարդություն է ներկայացնում գաղտնավանկ ը ունեցող բառերի ընթերցումը: Այսպիսի բառերը հիմնականում տրված են ը հնչյուն-տառի ուսուցումից հետո, որպեսզի դա չխանգարի հնչյունի և տառի զուգորդմանը: <<Բառերը վանկատված ձևով տալը սխալ է անդրադառնում բառապատկերների ընկալմանը, ուստի այդ կարգի բառերը նպատակահարմար է տալ վանկային կորերով կամ գծապատկերներով՝ առանց ավելորդ ը-ի գրության այդ մասին. Դեռևս 100 տարի առաջ խոսել է Բահաթրյանը>>[22, էջ 184

Օրինակ՝



հսկա

մկրատ

Բառի մեջ լսվող և չգրվող ը-ի գրության ուսուցումը պետք է կապել միայն տողադարձի ուսուցման հետ: Բառաշարքերի ընթերցման ժամանակ կարդալու գիտակցականությունն ապահովելու համար պետք է կիրառել կարդալու տարբեր ձևեր, քանի որ երեխաները շատ արագ անգիր են անում բառաշարքերը և բառերն ասում առանց կարդալու: Այդ ձևերից է ընտրովի ընթերցանությունը: Կան ընտրովի ընթերցանության տարբեր ձևեր՝ կարդալ բոլոր շարքերի առաջին բառերը, բոլոր շարքերի վերջին բառերը, երկվանկ բառերը, եռավանկ բառերը, միայն հատուկ անունները, պտուղների անունները, ծառերի անունները և այլն, կարելի է օգտագործել ցուցափայտը՝ ցույց տալու համար այն բառը, որը պետք է ընթերցվի և այլն:

<<Պետք է այնպես անել, որ դասարանի գրեթե բոլոր աշակերտներն էլ այս կամ այն չափով մասնակցեն նոր նյութի ընթերցմանը, փորձեն իրենց ուժերը և հավաստիանալ, որ իրենք կարող են նաև նոր դասն ինքնուրույն կարդալ: Այսպիսի նախապատրաստական աշխատանքը նպաստավոր պայմաններ է ստեղծելու ոչ միայն կարդալու ուսուցման, այլև դասն ինքնուրույն սովորելու համար>>[21, էջ 19]:

## **Բ. Բառակապակցության ընթերցում**

Երկու- երեք տարեկան առողջ երեխան խոսքային բարենպաստ միջավայրի պայմաններում սկսում է խոսել՝ գործածելով շարահյուսական որոշակի կանոններին համապատասխան լեզվական կառույցներ: Անշուշտ, այս ամենը փոքրիկը ձեռք է բերում մեծերի հետ հաղորդակցման և ընդօրինակման միջոցով: Այդ կերպ նա գործնականորեն յուրացնում է լեզվի միավորների կապակցման և արտասանական երանգավորման օրենքներ, ինչպես նաև շարահյուսության հիմնական միավորները՝ բառակազմությունն ու նախադասությունը:

Լեզվական այս միավորների ճիշտ համադրումից է հյուսվում երեխայի խոսքը: Աստիճանաբար այն ընդարձակվում, ընդլայնվում և դառնում է կապակցված, բովանդակային ամբողջություն: <<Որպեսզի կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորման այս ընթացքը մեթոդապես ճիշտ իրականանա, և հետագայում արդեն աշակերտները սովորեն բարդ կառույցներով բանավոր ու գրավոր ինքնուրույն խոսք հյուսել, հարկավոր է առաջին դասարանից քայլ առ քայլ ձևավորել լեզվական այս միավորները ճիշտ գործածելու նրանց ունակությունը>>[30, էջ 21-25]:

Ուսուցման գործընթացում առաջին հերթին կարևորվում է բառակապակցության ուսումնասիրումը, որովհետև լեզվական այդ միավորի ճիշտ յուրացումն ընկած է հասկանալով կարդալու կարողության հիմքում: Դեռևս գրաճանաչության նախալքբենական շրջանում աշխատանք է տարվում

բառակապակցություն կազմելու, այն նախադասության մեջ գործածելու կարողությունների ձևավորման ուղղությամբ: Այդ աշխատանքներն իրականացվում են ոչ միայն այբբենարանի միջոցով, այլև հատուկ այդ նպատակով կազմված վարժությունների համակարգի կիրառմամբ: <<Բառակապակցությունը, ըստ էության, նախադասության ձևավորման գործընթացում ներկայացվող մտքերն են. երեխաներին սովորեցնել ճանաչել և կազմել բառակապակցություններ, նշանակում է աշխատանք տանել մտքի բաղադրամասերի շուրջ >>[33, էջ 18]:

Գրաճանաչության գործընթացի հաջորդ՝ տառուսուցման փուլում, աշակերտները նախ կարդում են **բառ+առարկայի նկար**(հիմնականում՝ ածական+

գոյական. սուր դանակ,  դեղին պանիր  և այլն), ապա

ծանոթանում են ածական+գոյական կաղապարների (երկար մատիտ, քաջ զինվոր, հոտավետ մանուշակ) և այլն: Ըստ էության, աշակերտների ծանոթությունը խոսքի այս միավորին առաջին անգամ իրականանում է բառակապակցությունների՝ նման կաղապարների միջոցով: ՌԲստի հետագայում էլ իբրև բառակապակցություն՝ աշակերտները կամ բերում են վերը ներկայացված կառույցների նման օրինակներ, կամ շփոթում են դրանք նախադասության հետ: Կրտսեր դպրոցում իրականացված բազմաթիվ դասալսումների արդյունքում մենք եկել ենք այն եզրակացության, որ ուսուցիչները ևս հաճախ իբրև բառակապակցություն դիտարկում են միայն վերը բերված նմուշները, որոնք աշակերտների համար դառնում են <<բարացած>> օրինակներ:

Որպեսզի աշակերտներն ի սկզբանե գիտակցաբար ըմբռնեն բառակապակցությունների կառուցվածքային սրբությունները և ձեռք բերեն դրանք խոսքում ճիշտ գործածելու ունակություն, նախ պիտի հասկանան, որ թեև դրանք լեզվահաղորդակցման միավորներ են, սակայն միայն նախադասության մեջ և նախադասության միջոցով են մտնում լեզվի հաղորդակցման միջոցների համակարգ: Այս խնդրի լուծման նպատակով շահեկան է իրականացնել պարզ, բայց երեխաների համար

հետաքրքրություն ներկայացնող վարժություններ: Անշուշտ ուսուցիչները տեղյակ են, որ բառակապակցությունները իրենցից ներկայացնում են քերականական միասնություն: Դրանք կաղմված են ոչ պակաս, քան երկու ինքնուրույն խոսքի մաս ներկայացնող բառերից որոնցից մեկը լրացնում է մյուսի իմաստը: Յենց այս պատճառով էլ բառակապակցության ամենապարզ իմաստի յուրացումից և գործնականում դրանք կազմելու ամենատարրական փորձերից հետո շահեկան է աշակերտներին սովորեցնել բառակապակցությունը նախադասության մեջ գործածել, որպեսզի դրանք ուսումնասիրվեն իբրև նախադասության կազմի մեջ ներառվող կառուցվածքային մասեր: Միաժամանակ ուսուցիչը չպետք է մոռանա, որ դրանց կազմում առանձնանում են գերադաս և կախյալ բաղադրամասեր: Միայն այս կապակցվածության՝ մեկը մյուսին լրացնելու, մեկը մյուսով պայմանավորված լինելու հանգամանքի գիտակցումը աշակերտների կողմից կնպաստի խոսքի մեջ դրանք ճիշտ գործածելու հմտության յուրացմանը և նրանց բառապաշարի հարստացմանը: Կարևոր է տարբերել բառերի պարզ հաջորդականությունը բառակապակցությունից:

Չպետք է մոռանալ, որ, ըստ էության, բառակապակցությունները բառի և նախադասության միջև գրավում են միջանկյալ դիրք: Չնույնանալով, չծուլվելով միմյանց՝ դրանք պարզապես դառնում են խոսքի նյութական հիմքը: Յետևաբար նախադասության և կապակցված խոսքի կազմի մեջ մտնող բառակապակցությունների տարբեր խմբերի ուսումնասիրումն անվերապահորեն կօժանդակի կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը, կհարստացնի նրանց խոսքի բաղադրիչների՝ նախադասությունների կառուցվածքը[31, էջ 47]:



Կարդալու հաջորդ միավորը բառակապակցությունն է, որի ընթերցումը ևս ունի իր առանձնահատկությունները, դրանք ևս պետք է հաշվի առնել ուսուցման գործընթացում: Ծանոթացումը լեզվական այդ միավորին <<Այբբենարանում>> սկսվում է հինգերորդ հնչյուն-տառի ուսուցման դասից, թեև դրանց գծապատկերներին հանդիպում են դեռևս նախայբբենական շրջանում և բառակապակցություններ են կազմում **հատկանիշ+առարկա** կաղապարով:

Բառակապակցության՝ որպես մեկ ամբողջական, կապակցված միավորի գիտակցումն ու ճանաչումը կարևոր է ընթերցանության ժամանակ այն ճիշտ

հնչերահզով արտաբերելու համար: Բառակապակցության բաղադրիչ բառերը չպետք է հնչեն որպես առանձին, անկախ միավորներ: Այսպես՝ անուշ նուշ, ամուր արմատ, զով անտառ, ճերմակ կարապ, դատարկ դարպաս և այլ բառակապակցություններից յուրաքանչյուրը պետք է արտաբերվի որպես իմաստով կապված մեկ ամբողջական միավոր, որն ընթերցանության ժամանակ պետք է արտահայտվի ձայնի բարձրացումով և ցածրացումով:

Բառակապակցությունների ընթերցումը շատ կօգնի աշակերտների միջոցով բառակապակցություններ կազմելու բանավոր վարժությունները, որոնք կարելի է կատարել 2 սկզբունքով՝ 1) առաջադրել առարկա ցույց տվող բառը և պահանջել համապատասխան հատկանիշ գտնել ու բառակապակցություն կազմել (օրինակ՝ **կատու** – սիրուն կատու, տան կատու, սև կատու, ճարպիկ կատու, փափկամազ կատու, կոշկավոր կատու...), 2) տալ հատկանիշ ցույց տվող բառը և պահանջել գտնել այդ հատկանիշն ունեցող առարկաներ ու կազմել բառակապակցություններ (օրինակ՝ **սիրուն**– սիրուն կատու, սիրուն տուն, սիրուն ծաղիկ, սիրուն երեխա): Դեռևս նախապատրաստական շրջանում բառակապակցություններ կազմելը, տրված առարկաների համար հատկանիշներ ընտրելը, առարկաները բնութագրելը կնպաստի, որ երեխայի մոտ թեկուզ բանավոր խոսքում կազմվի լեզվական այդ միավորի բառային և հնչերանգային ճիշտ կաղապարը:



Այս աշխատանքն իրագործելուն կարող են նպաստել <<Այբբենարանում>> հանձնարարվող հետևյալ կաղապարները.



խաղաղ նույն առարկային,

3) □ ուլիկ  
    Լալա, երբ դատարկ վանդակը պետք է լրացվի այնպիսի հատկանիշով, որը բնորոշ է, և՛ ուլիկին, և՛ Լալային:

Վարժություններ կարելի է կատարել նաև առարկայի և գործողության կապակցումով, ինչպես օրինակ՝



Այսպիսի առաջադրանքները նպաստում են բառակապակցությունների ճիշտ ընթերցմանը և հիմք ստեղծում նախադասությունների ընթերցման համար:

**9. Նախադասության ընթերցում**

Կարդալու հաջորդ՝ ավելի ծավալուն միավորը նախադասությունն է, որի ընթերցումը նույնպես ունի իր դժվարություններն ու դրանց հաղթահարման առանձնահատկությունները:

Սովորաբար երեխայի ուշադրությունը կենտրոնանում է առանձին բառերի ընթերցման վրա, և նա չի կարողանում դրանց կապակցել մեկ ամբողջության մեջ ու հասկանալ միտքը: Նախադասության մեջ մտնող բառերի՝ մեկ ընդհանուր մտքով իրար հետ կապված լինելն աշակերտներին գիտակցել տալու և նախադասության միտքն ընկալելի դարձնելու համար կարելի է կարդացածը վերարտադրել տալ, երբեմն դանդաղեցնել ընթերցման տեմպը, օգտագործել վերընթերցումը: Սրանք նպաստում են, որ ճիշտ ընկալվեն ոչ միայն

առանձին բառերի բառիմաստները, այլև դրանց միջև եղած տրամաբանական ու քերականական կապերը, հետևաբար նաև՝ ամբողջական նախադասության միտքը:

Հայերենում նախադասության ընթերցման ժամանակ ծագող դժվարություններից մեկն էլ օժանդակ բայի ընթերցումն է: Օժանդակ բայը ոչ միայն գործողությունը և ընդհանրապես հատկանիշը ենթակային վերագրող միավոր է, այլև գործողության դեմքի, թվի ժամանակի իմաստները կրողը, և նրա ճիշտ ընթերցումը մեծ նշանակություն ունի նախադասության միտքը հասկանալու համար: Ե (ե) հնչյուն-տառերի ուսուցման դասին առաջին իսկ գործածության առիթով աշակերտներին սլաքով ցուցադրվում է Է-ի՝ նախորդ բառերի հետ ձույլ կարդալու անհրաժեշտությունը <<Սա էջ է,...>>: Դիզակտիկ կյուլթն միջոցն է կիրառված նաև Ե (յե) տառի ուսուցման դասի՝ <<Պստիկ ես,...>> երկրորդ դեպքում սլաքի կիրառությունն ունի նաև եմ, ես, ենք, եք, են օժանդակ բայերում Ե-ի ուղղախոսական արժեքը բացատրելու նպատակ:

Գլոբալ մեթոդը՝ որպես ամբողջական բառերով կարդալու ուսուցման մեթոդ, ըստ էության, նախատեսված է ոչ թեքական լեզուների համար, իսկ հայերենը թեքական լեզու է:


Ահա թե ինչու՛ Ա. Տեր-Գրիգորյանը գտնում է, որ նախապատրաստական շրջանում պետք է անհրաժեշտ ուշադրություն դարձնել վերլուծական ու համադրական վարժություններին, որպեսզի երեխաները բառերը չընկալեն որպես անփոփոխ բառապատկերներ և թեքված ձևերում էլ դրանք կարդալ ուղիղ ձևով: Այդ նպատակով ևս <<Այբբենարանում>> հետաքրքրական հնարներ կան կիրառված: Այսպես հոգևակիակերտ եր և ներ վերջավորությունների ուսուցումը ոչ միայն հոգևակիի կազմության ցուցադրման, այլև բառերում վերջավորությունները պատրաստի տեսնելու և ընկալելու կարողության ձևավորման նպատակ ունի:


Երեխաները, բառերի սկիզբը կարդալով, հաճախ ձգտում են վերջը ինքնուրույն լրացնել, որը ոչ միշտ է ճիշտ դուրս գալիս: Այդ անցանկալի երևույթը կանխելուն կարելի է ծառայեցնել բնագրերում նկար- բառերի կողքին վերջավորությունների գործածությունը, որը նպաստում է դրանք որպես բառափոխական առանձին միավորների մատուցելուն, ցուցադրելուն:







**փ Փ**

փուշ      փայլ      Սիրարփի  
փեշ      փայլուն      Արփինե

փղի    
հսկա փիղ

   
կրկես

**Փղերը հիշում են ...**

Մի ոստիկան մտավ կրկես ու ասաց.  
\_ Փիմփոմ փիղը կոխտել է պարտեզի  ներքո:  
Փիղը մեղավորի պես նայեց նրան:  
Սկսվեց ներկայացումը. փիղը պարում էր, պտույտներ անում: Մի  մեխակներ նվիրեց փղին: Փիղը  ով վերցրեց զամբյուղը, խոնարհվեց ու տվեց ոստիկանին:  
Ոստիկանը ժպտաց ու շոյեց փղի  օ:

*փ փ*

Նախադասության ընթերցման ժամանակ ծագող մյուս դժվարությունը և հողն ունեցող և նրան հաջորդող բառերի միափույլ ընթերցանության խնդիրն է: Այս դեպքում ևս առաջին իսկ առիթով երեխաների ուշադրությունը հրավիրվում է այդ երևույթի վրա՝ «Արուսն ունի տիկնիկ սիրուն» , «Արան իր տունն ում պիտի տա»», «Սա իմ տիկնիկն է» և այլն:

Նախադասության ճիշտ ընթերցումը կապված է նաև քերականական ու տրամաբանական շեշտի հետ: Նախադասության սկիզբն ու ավարտը, բառերի փոխկապակցված լինելը արտահայտում են նաև տրամաբանական շեշտի միջոցով, որը պետք է դրսևորի ընթերցելիս՝ տեմպի և ձայնի ելևէջների ուժեղացման ու թուլացման ճանապարհով:

## **Դ. Կապակցված բնագրի ընթերցում**

Կարդալու ուսուցման ուղղությամբ տարվող բոլոր աշխատանքների վերջնական նպատակը կապակցված բնագրի ճիշտ ու գիտակցական ընթերցումն է:

Տառի, վանկի, բառի փոխարեն ընկալման պարզ միավորներ պետք է դառնան ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար բավականաչափ դժվարություն են ներկայացնում:

Կապակցված բնագրի ընթերցման մյուս դժվարությունը կապված է հնչերանգի բարդացման, տրամաբանական շեշտերի ու դադարների պահպանման հետ: Եթե նախադասության տրամաբանական շեշտի և վերջակետի ճիշտ զգացողության հետ: Այդ նպատակով բնագրին վերաբերող նկարը, ապա զրույց անցկացնել, դրա շուրջ, որպեսզի հնարավոր լինի երեխային թեմայի ոլորտը ներգրավել: Դրան կարող է նպաստել նաև բնագրի դիտումը կամ <<լուռ ընթերցումը>>: Երեխային գեղեցիկ ու կանոնավոր կարդալ սովորեցնելու համար կարելի է գործադրել նաև բնագրի բառերի շուրջ տարվող բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը, վերընթերցումը: Առաջին անգամ կարդալիս երեխան պետք է փորձի ճիշտ ընկալել բառապատկերներն ու դրանց կապերը, իսկ երկրորդ անգամ՝ տրամաբանական շեշտն ու դադարները:

Գիտակցորեն ու հասկանալով կարդալ սովորեցնելու համար կարելի է գործադրել 1) կարդացածի վերաբերյալ հարցեր տալու, 2) ընտրովի ընթերցում անցկացնելու 3) կարդացած բովանդակությունը լրացնելու նպատակով բնագրի կապակցությամբ տրված նկարները դիտելու և այլ մեթոդական ձևեր:

Կարդալու որակական հատկանիշների մշակման տեսակետից չափազանց կարևոր է ուսուցչի օրինակը՝ հատկապես, եթե բնագիրը հարուստ է առոգանության նշաններով ու երկխոսություններով: Իսկ նկարագրական բնույթի բնագրերը նպատակահարմար է, որ երեխանորը ինքնուրույն կարդան (իհարկե, նախապատրաստական զրույցից հետո), որպեսզի չվերածվեն պասիվ ընդօրինակողների: Այս եղանակը կարելի է կիրառել հատկապես ամրապնդման դասերին՝ աշակերտների ակտիվությունը բարձրացնելու և նրանց ինքնուրույնության մղելու համար:

Գրաճանաչության փուլում աշակերտի մեջ պետք է մշակվի նաև կարդալու կարողություն, որն ըստ էության ինքնըստինքյան արդեն տեղի է ունենում որպես ձայնով կարդալուն նախորդող մտավոր գործողություն, մինչև որ նա սովորում է այնքան վարժ կարդալ, որ ընկալման ու վերարտադրման փուլերը գրեթե միաժամանակ են կատարվում: Այդ կարողության մշակումը սկսվում է ուսուցչի կամ ընկերոջ կարդացածին լուռ հետևելուց և աստիճանաբար կատարելագործվում ընտրովի ընթերցանության ժամանակ: Սակայն խորհուրդ չի տրվում լուռ ընթերցումը գրաճանաչության փուլում չարաշահել, քանի որ բարձրաձայն կարդալիս երեխան ավելի շուտ է նկատում իր թույլ տված սխալը, քան լուռ կարդալիս:

Այս շրջանում թյուլատրելի է նաև խմբովի ընթերցումը, որը նպաստում է աշակերտների ակտիվացմանը: Սակայն ընթերցման այս ձևն էլ պետք է չափավոր գործադրել, քանի որ լավ չկարդացող աշակերտները կարող են տեսադաշտից դուրս մնալ և խմբովին կարդալիս՝ նյութը անգիր անել: Ահա թե ինչու այս ձևով կարելի է կարդալ արդեն անհատաբար կարդացված նյութը, այն էլ՝ դասի վերջում:

Գրաճանաչության փուլում գործադրվում են ձայնային և լուռ, ընտրովի, խմբովին, մեկնաբանելով կարդալու ձևերը, որոնք նպաստում են կարդալու կարողությունների ձևավորմանը, մշակմանը, կարդալու տեխնիկայի, արտասանության ու խոսքի ապարատի զարգացմանը:

Կարդալու որակական բոլոր հատկանիշների (ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ և արագ) ուսուցումը կատարվում է միաժամանակ՝ որակական տարբեր մակարդակներով: Թերևս միայն արագ կարդալու հատկանիշն է, որ այս շրջանում զարգացում չի ունենում: Այդ կողմի վրա ուշադրություն էլ չի դարձվում, քանի որ այն հիմնվում է մյուս չորս հատկանիշների վրա, թերևս պետք է նշենք նաև, որ արագ կարդալու հիմքերն էլ, ըստ էության, դրվում են հենց այս պահին՝ ամբողջական բառերով կարդալու կարողությունների մշակման հետ:

Կարդալու ուսուցման համար կարևոր նշանակություն ունի աշակերտների բառապաշարի հարստացումը, քանի որ ծանոթ, հայտնի բառերը նրանք ավելի հեշտ են կարդում, քան անծանոթ բառերը: Հետևաբար գրաճանաչության

փուլում ևս բառապաշարի հարստացման խնդիրը ուսուցչի հիմնական նպատակներից մեկը պետք է լինի. դա թե՛ կարդալու կարողության ձևավորման, թե՛ խոսքի զարգացման նպատակ ունի:

<<Այբբենարանի>> ամեն մի էջ մեկ ամբողջականություն է կազմում. բառաշարքեր, բառակապակցություններ, կապակցված բնագրեր, նկարներ, հանելուկներ, շուտասելուկներ, խաղեր մեկ ամբողջի մասերն են: Ու թեև դրանք ընթերցվում են առանձին-առանձին և հաճախ ձևավորված են որպես առանձին ամբողջական միավորներ, բայց դասի ընթացքում պետք է դրանք միմյանց հետ կապել, միավորել մի ամբողջության մեջ: Այդպիսի աշխատանքը նպաստում է երեխաների ճանաչողության, խոսքի ու մտածողության զարգացմանը, ասված բառերը խոսքի մեջ գործածելու և համադրելու կարողությունների մշակմանը, որը խիստ կարևոր և անհրաժեշտ է կարդալու և գրելու համար:

## Եզրակացություններ

Կարդալու կարողության ձևավորումը գրաճանաչության գործընթացի հիմնական բաղադրիչներից ու նպատակներից մեկն է: Այն սկսվում է ձևավորվել դեռևս գրուսուցման նախապատրաստական փուլում, երբ երեխաները ծանոթանում են լեզվական միավորներին և գծապատկերների միջոցով աստիճանաբար լեզվական կառույցի վերլուծության ու համադրության աշխատանքներ են կատարում: Այս շրջանում մշակվում է երեխայի հնչյունային լսողությունը, և նա սկսում է կարդալ վանկային ու հնչյունային կադապարներով: Հետևաբար՝ անհրաժեշտ է ոչ միայն գրուսուցման նախապատրաստական փուլի նպատակների ու խնդիրների, կարդալու կարողության ձևավորման մեթոդական ընդհանուր սկզբունքների տեսական իմացություն, այլև այբբենարանում նախայբբենական փուլում կիրառվող սկզբունքների, մեթոդների ու եղանակների յուրացում, քանի որ հատկապես դրանց վրա է հիմնված կարդալու կարողության ձևավորման գործընթացը:

1. Գրաճանաչության գործընթացը պիտի կազմակերպվի ոչ միայն այբբենարանով և շրջանառության մեջ եղած ուսումնասովանողակ նյութերով, այլև դասարանի կարողություններով պայմանավորված՝ ստեղծվեն հատուկ զննական պարագաներ, որոնք ուղղված կլինեն հենց տվյալ դասարանի աշակերտների կարդալու կարողության ձևավորմանը:
2. Կարդալու կարողության ձևավորումը գրուսուցման այբբենական շրջանով չի ավարտվում. այն շարունակվում է նաև հետայբբենական փուլում, որն ունի իր խնդիրները: Այսօր հետայբբենական շրջան է համարվում ոչ միայն այն մեկ շաբաթը, որը հաջորդում է գրաճանաչության այբբենական փուլին և «Այբբենարանում» արտահայտվում է մի քանի դասանյութերով, այլ նաև առաջին դասարանի մնացած՝ ավարտական հատվածը, որը շարունակվում է «Մայրենի 1» դասագրքով: Հետևաբար այդ շրջանում հիմնավոր և ծրագրավորված աշխատանք պիտի իրականացնել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի դժվարություններն ու բացթողումները:
3. Գրաճանաչության շրջանում կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կարևորել ինքնուրույն ընթերցանությունն ու աշխատանքը կարդացած նյութերի շուրջ:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր. Չանգակ 2018, 394 էջ:
2. Տեր-Գրիգորյան Ա. Ե, Գրաճանաչության մեթոդիկա, Երևան, Լույս, 1983թ., 420 էջ:
3. Տեր-Գրիգորյան Ա. Ե, Աշխատանք այբբենարանով, Երևան, Լույս 1980թ.:
4. Տեր-Գրիգորյան Ա. Ե,: Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Լույս, 1986, 294 էջ:
5. Քյուրբջյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարանի ուղեցույցը (ուսուցչի ձեռնարկ) Երևան, Էդիթ Պրինտ, 2007թ.: